ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

ՀՀ քաղաքաշինության կոմիտեն, որը գտնվում է ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3 հասցեում ստորև ներկայացնում է իր կարիքների համար ՀՀ Գեղարքունիքի մարզի (թվով 51 բնակավայրը ներառող 5 փաստաթուղթ) միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի նախագծերի մշակման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-21/7 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2022 թվականի հունվարի 25-ին կնքված N ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-21/7 գնման պայմանագրում 2023 թվականի օգոստոսի 31-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ N1	ՀՀ կառավարության 03.08.2023թ. N1319-Ն որոշում:
Փոփոխության նկարագրություն	N ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-21/7 գնման պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցների հատկացում:
Փոփոխության հիմնավորում	Պայմանագրի 7.5 կետ:

Պատվիրատու՝ *ՀՀ քաղաքաշինության կոմիտե*

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 2

25.01.2022թ. կնքված N ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-21/7 գնման պայմանագրի

ք. Երևան «31» «08» 2023թ.

Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեն (այսուհետ՝ Պատվիրատու)՝ ի դեմս կոմիտեի գլխավոր քարտուղար Ա. Մկրտչյանի, որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և <<ԱՏՐԻՈՒՄ ՊՐՈ ՍՏՈՒԴԻՈ>> ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կատարող), ի դեմս տնօրեն Ա. Հակոբյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, (երկուսը միասին՝ այսուհետ՝ Կողմեր) հիմք ընդունելով ՀՀ կառավարության 03.08.2023թ. N 1319-Ն որոշումը և ՀՀ Գեղարքունիքի մարզի (թվով 51 բնակավայրը ներառող 5 փաստաթուղթ) միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի նախագծերի մշակման աշխատանքների կատարման համար Կողմերի միջև 25.01.2022թ. կնքված ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-21/7 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 7.5 կետը, կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1.1.Կողմերը որոշեցին՝ Պայմանագիրը լրացնել նոր հավելված N 2-ով՝ համաձայն Համաձայնագրի հավելվածի:

2. Այլ պայմաններ

2.1 Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Համաձայնագրում Կողմերի համար չնշված՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները մնում են անփոփոխ:

2.3 Համաձայնագիրը և հավելվածը կազմված են մեկական էջից, կնքվում են երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Համաձայնագրի հավելվածը համարվում է Համաձայնագրի անբաժանելի մասը: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝

ՀՀ քաղաքաշինության կոմիտե
ք. Երևան, Հանրապետության հրապարակ,
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011030161
ՀՎՀՀ 02565827

Գլխավոր քարտուղար՝

_____ Ա. Մկրտչյան
(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ՝

<<ԱՏՐԻՈՒՄ ՊՐՈ ՍՏՈՒԴԻՈ>> ՍՊԸ
ք. Երևան, Մ. Բաղրամյան 1 ՓԿՂ, 14շ, բն 12
<<ԱԿԲԱ-Կրեդիտ Ագրիկոլ բանկ>> ՓԲԸ
Հ/Հ 220300122227000
ՀՎՀՀ 00115353

Տնօրեն՝

_____ Ա. Հակոբյան
(ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված
25.01.2022թ. կնքված
N ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-21/7 գնման պայմանագրի
31.08.2023 թ. կնքված N 2 համաձայնագրի

<<Հավելված N 2
25.01.2022թ. կնքված
N ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-21/7 գնման պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Աշխատանքի														
հերթով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2023 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում*											
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
2	71241200/236	ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ «ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ-1», «ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ-2», «ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ-5», «ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ-6» և «ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ-7» միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի նախագծերի մշակման աշխատանքներ	-	-	-	-	-	-	-	-	-	113 000 000	113 000 000	113 000 000	113 000 000

*Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:>>:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝

ՀՀ քաղաքաշինության կոմիտե
ք. Երևան, Հանրապետության հրապարակ,
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011030161
ՀՎՀՀ 02565827

Գլխավոր քարտուղար՝

_____ Ա. Մկրտչյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ՝

<<ԱՏՐԻՈՒՄ ՊՐՈ ՍՏՈՒԴԻՈ>> ՍՊԸ
ք. Երևան, Մ. Բաղրամյան 1 ՓԿՂ, 14$_2$, բն 12
<<ԱԿԲԱ-Կրեդիտ Ագրիկոլ բանկ>> ՓԲԸ
Հ/Հ 220300122227000
ՀՎՀՀ 00115353

Տնօրեն՝

_____ Ա. Հակոբյան
(ստորագրություն)
Կ.Տ.

22 օգոստոսի 2023թ.
ք. Երևան

Թիվ 030-593

ԲԱՆԿԱՅԻՆ ԵՐԱՇԽԻՔ
ԹԻՎ 2330844200

(որակավորման ապահովում)

1. Սույն երաշխիքը (այսուհետ՝ Երաշխիք) հանդիսանում է ՀՀ քաղաքաշինության կոմիտեի (այսուհետ՝ Բենեֆիցիար) կողմից թիվ «ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-21/7» ծածկագրով կազմակերպված գնման ընթացակարգի արդյունքում «ԱՏՐԻՈՒՄ ՊՐՈ ՍՏՈՒԴԻՈ» ՍՊԸ (այսուհետ՝ Պրինցիպալ) կողմից թիվ «ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-21/7» պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ որակավորման ապահովում (այսուհետ՝ Երաշխավորված պարտավորություններ):

2. Երաշխիքով «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ-ն (այսուհետ՝ Երաշխիք տվող անձ) անվերապահորեն պարտավորվում է Բենեֆիցիարի՝ սույն Երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով (այսուհետ՝ Պահանջ) Բենեֆիցիարին վճարել 33.900.000 (երեսուներեք միլիոն ինը հարյուր հազար) ՀՀ դրամ (այսուհետ՝ Երաշխիքի գումար) Պահանջը ստանալուց 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում: Վճարումը կատարվում է Բենեֆիցիարի 900008000664 հաշվեհամարին փոխանցման միջոցով:

Որակավորման ապահովման գումարը նվազեցվում է, եթե առկա են ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 26-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները:

3. Սույն Երաշխիքն անհետկանչելի է:

4. Սույն Երաշխիքից բխող Բենեֆիցիարի՝ Երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի Երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:

5. Երաշխիքը գործում է տրման օրվանից մինչև 30 նոյեմբերի 2023թ.-ը ներառյալ: Սույն երաշխիքի բնօրինակից արտատպված տարբերակը Երաշխիք տվող անձը Երաշխիքը տրամադրելու օրն իր պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեից ուղարկում է նաև սույն երաշխիքի 1-ին կետում նշված ծածկագրով կազմակերպված գնման ընթացակարգի հրավերում նշված՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային փոստի հասցեին:

6. Բենեֆիցիարը Պահանջը ներկայացնում է Երաշխիք տվող անձին գրավոր ձևով: Պահանջին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը.

1) N «ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-21/7» ծածկագրով կնքված պայմանագրի, ներառյալ նաև դրանում կատարված փոփոխությունների, լրացուցիչ համաձայնագրերի պատճենները,

2) Բենեֆիցիարի կողմից պայմանագիրը միակողմանի լուծելու մասին www.procurement.am հասցեով գործող տեղեկագրում հրապարակած ծանուցումը:

7. Երաշխիք տվող անձը Բենեֆիցիարի կողմից ներկայացված Պահանջը և կից փաստաթղթերն ստանալուց հետո առավելագույնը 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված Պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն Երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:

8. Երաշխիք տվող անձը մերժում է Բենեֆիցիարի Պահանջը, եթե.

1) Պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն Երաշխիքի պայմաններին,

2) Պահանջը ներկայացվել է Երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:

9. Երաշխիք տվող անձը Պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը մերժման մասին տեղեկացնում է Բենեֆիցիարին:

10. Սույն Երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:

11. Սույն Երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

«Զեյթուն» մասնաճյուղի կառավարիչ Բ. Միքայելյան

Կատարող՝
Տաթևիկ Մարտիրոսյան
Հեռ.՝ 010 31-88-88 (ներքին՝ 7089)

22 օգոստոսի 2023թ.
ք. Երևան

Թիվ 030-592

ԲԱՆԿԱՅԻՆ ԵՐԱՇԽԻՔ
ԹԻՎ 2330844223

(պայմանագրի ապահովում)

1. Սույն երաշխիքը (այսուհետ՝ Երաշխիք) հանդիսանում է ՀՀ քաղաքաշինության կոմիտեի (այսուհետ՝ Բենեֆիցիար) և «ԱՏՐԻՈՒՄ ՊՐՈ ՍՏՈՒԴԻՈ» ՍՊԸ (այսուհետ՝ Պրինցիպալ) միջև թիվ «ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-21/7» պայմանագրից (այսուհետ՝ Պայմանագիր) բխող Պրինցիպալի պարտավորությունների (այսուհետ՝ Երաշխավորված պարտավորություն-ներ) կատարման ապահովում:

2. Երաշխիքով «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ-ն (այսուհետ՝ Երաշխիք տվող անձ) պարտավորվում է Բենեֆիցիարի՝ սույն Երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով (այսուհետ՝ Պահանջ) Բենեֆիցիարին անվերապահորեն վճարել 11.300.000 (տասնմեկ միլիոն երեք հարյուր հազար) ՀՀ դրամ (այսուհետ՝ Երաշխիքի գումար) Պահանջը ստանալուց հետո 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում: Վճարումը կատարվում է Բենեֆիցիարի 900008000664 հաշվեհամարին փոխանցման միջոցով:

3. Սույն Երաշխիքն անհետկանչելի է:

4. Սույն Երաշխիքից բխող Բենեֆիցիարի՝ Երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի Երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:

5. Երաշխիքը գործում է տրման օրվանից մինչև 30 նոյեմբերի 2023թ.-ը ներառյալ: Սույն երաշխիքի բնօրինակից արտատպված տարբերակը Երաշխիք տվող անձը Երաշխիքը տրամադրելու օրն իր պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեից ուղարկում է նաև սույն երաշխիքի 1-ին կետում նշված պայմանագրի կնքման նպատակով կազմակերպված գնման ընթացակարգի հրավերում նշված՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային փոստի հասցեին:

6. Բենեֆիցիարը Պահանջը ներկայացնում է Երաշխիք տվող անձին գրավոր ձևով: Պահանջին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը.

1) N «ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-21/7» պայմանագրի, ներառյալ նաև դրանում կատարված փոփոխությունների, լրացուցիչ համաձայնագրերի պատճենները,

2) Բենեֆիցիարի կողմից պայմանագիրը միակողմանի լուծելու մասին www.procurement.am հասցեով գործող տեղեկագրում հրապարակած ծանուցումը:

7. Երաշխիք տվող անձը Բենեֆիցիարի կողմից ներկայացված Պահանջը և կից փաստաթղթերն ստանալուց հետո առավելագույնը 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված Պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն Երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:

8. Երաշխիք տվող անձը մերժում է Բենեֆիցիարի Պահանջը, եթե.

1) Պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն Երաշխիքի պայմաններին,

2) Պահանջը ներկայացվել է Երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:

9. Երաշխիք տվող անձը Պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը մերժման մասին տեղեկացնում է Բենեֆիցիարին:

10. Սույն Երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:

11. Սույն Երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

«Զեյթուն» մասնաճյուղի կառավարիչ Բ. Միքայելյան

Կատարող՝
Տաթևիկ Մարտիրոսյան
Հեռ.՝ 010 31-88-88 (ներքին՝ 7089)

acba

29 օգոստոսի 2023թ. Թիվ 030-618

Թիվ 2330844223 ԲԱՆԿԱՅԻՆ ԵՐԱՇԽԻՔԻ ՊԱՅՄԱՆԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 01

(թիվ 2330844223 պայմանագրի ապահովման երաշխիքի հավելված)

Սույնով «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ-ն «ԱՏՐԻՈՒՄ ՊՐՈ ՍՏՈՒԴԻՈ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Պրինցիպալ) դիմումի հիման վրա 22/08/2023թ.-ին հօգուտ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի տրամադրված թիվ 2330844223 բանկային երաշխիքի 5-րդ պարբերությունը շարադրում է հետևյալ կերպ.

- «5. Երաշխիքը գործում է տրման օրվանից մինչև 31 մայիսի 2024թ.-ը ներառյալ: Սույն երաշխիքի բնօրինակից արտատպված տարբերակը Երաշխիք տվող անձը Երաշխիքը տրամադրելու օրն իր պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեից ուղարկում է նաև սույն երաշխիքի 1-ին կետում նշված պայմանագրի կնքման նպատակով կազմակերպված գնման ընթացակարգի հրավերում նշված՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային փոստի հասցեին:»:

Թիվ 2330844223 բանկային երաշխիքի մյուս բոլոր պայմանները մնում են անփոփոխ:

«Զեյթուն» մասնաճյուղի կառավարիչ Բ. Միքայելյան

Կատարող
Գայանե Սահակյան
Հեռ. 010 31-88-88 (ներքին 8259)

29 օգոստոսի 2023թ.

Թիվ 030-619

Թիվ 2330844200 ԲԱՆԿԱՅԻՆ ԵՐԱՇԽԻՔԻ ՊԱՅՄԱՆԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 01

(թիվ 2330844200 որակավորման ապահովման հավելված)

Սույնով «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ-ն «ԱՏՐԻՈՒՄ ՊՐՈ ՍՏՈՒԴԻՈ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Պրինցիպալ) դիմումի հիման վրա 22/08/2023թ.-ին հօգուտ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի տրամադրված թիվ 2330844200 բանկային երաշխիքում կատարում է հետևյալ փոփոխությունը.

- «5. Երաշխիքը գործում է տրման օրվանից մինչև 31 մայիսի 2024թ.-ը ներառյալ: Սույն երաշխիքի բնօրինակից արտատպված տարբերակը Երաշխիք տվող անձը Երաշխիքը տրամադրելու օրն իր պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեից ուղարկում է նաև սույն երաշխիքի 1-ին կետում նշված պայմանագրի կնքման նպատակով կազմակերպված գնման ընթացակարգի հրավերում նշված՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային փոստի հասցեին:»:

Թիվ 2330844200 բանկային երաշխիքի մյուս բոլոր պայմանները մնում են անփոփոխ:

«Զեյթուն» մասնաճյուղի կառավարիչ Բ. Միքայելյան

Կատարող՝
Գայանե Սահակյան
Հեռ.՝ 010 31-88-88 (ներքին՝ 8259)